

4 Յիշեցէք զմեծ քարանայն ֆորնեհզ, որ սպանմանք եղարծ զպղծութիւնս . . . և յազգէ յազգ երզմամք հաստատեաց զքարանայնութիւնս. Է. 20.

5 Յիշեցէք ամենքեան զգարսն զառաջինս յիւրաքանչիւր ժամանակս . . . որ ըստ հաւատոյ քաջութիւնս կատարեցին ի դարս իւրաքանչիւր Ծ. 199, 205;

6 Յարձակէին և զալ թեւն քեկեալ և զճախոյ կողմամբն արկեալ . . . և փախըստական անէին մինչև յամուր տեղիս մայրեաց . . . Գ. 141.

7 Մասուկալէս քախեալք ընդ միմանս յերկողնց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային Զ. 221.

8 Գուժան հասանէր յաշխարհէն Հայոց զճակատ հարեալ, զօժիս պատանեալ վասն . . . 145.

9 . . . Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մտքոց . . . բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեցուք Է. 189. և Թ. 56.

10 Վկայ են մեզ երկինք և երկիր . . . ի զուր անողորմ են հարուածքս ի վերայ մեր Թ. 56.

11 Ամենայն ազգ և լեզուք, որ ընդ ինով իշխանութեամբ դադարեցան յիւրաքանչիւր մուգ օրինաց և միայն սկսեցան յերկրագութիւն արեգական . . . Բ. 55;

12 Եթէ միայն, ասէ, յանձին կալիք զօրէնս մոգութեան, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից . . . նա ասուել զանցուցից . . . Բ. 51.

13 Անդ յանձանձէր ամէր զօրավարս զկաց և զմնաց զօրականն . . . հասուցեալ յաւուրս երեսուն ի սամաւնցս հայրենի աշխարհին . . . Գ. 147;

4 Փնտէս հայր մեր նախանձայոյ՞ նախանձեցաւ արդարութեան և առ կտակ յախտեցիք զքարանայնութեանս Ա. Բ. 51.

5 Յիշեցէք զգործս հարցն մտքոց, որ ինչ արարին ի դարոցս իւրաքանչիւր: Արքայամապաքէն ի փրկութեան գտաւ հաւատարիմ . . . Ա. Բ. 51.

6 Զաջակողմեան թեւն քեկանէր և զճախոյ արկանէր և անդստին առաջի արկեալ փախստեայ տանէր մինչև ի կողմանս լեռինս Ազոլտայ Ա. Թ. 15.

7 Յանմ վայրի վերաւորք յերկուց կողմանց անկեալ ընդ երկիր թաւալէին. Ա. Թ. 17.

8 Գուժանք հասանէն ի կողմանցն . . . զօժիս պատանեալ, զճակատ հարեալ և զզոյժս զայս տային Ա. Ծ. 14;

9 Զաւ ւնցի ինձ աննել զիրող զայդ. — Եթէ հասեալ իցէ ժամանակ մեր, մտքուք քաջութեամբ ի վերայ եղբարք մտքոց, և ոչ խառնեցուք զանուն վատութեան ընդ արութիւնս քաջութեան Ա. Թ. 40.

10 Ջի աւողիկ վկայ են մեզ երկինք և երկիր, զի ի զուր տարապարտոց կորուսանէք զմեզ Ա. Բ. 58.

11 Ընդ ամենայն աշխարհս հրաժարտակց արձակեցան, զի թողցան ամենայն ըսակիչք երկրին զօրէնս իւրաքանչիւր և ի մի օրէնս տորա կացցան. Ա. ար. 45.

12 Երզմամք հաստատէր ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցանել, երանելի առնել յաշխարհի Բ. Է. 21.

13 Անդ յանձանձէր զկաց մընաց ժողովրդեան, միջիւրէր զամենեանս . . . մինչև ամէր հասուցանէր յերկիր չբէաստանի Ա. Է. 55.

Ահա որտեղ պէտք է փնտաւել սկզբում միշուած ընդհանրացած կարծիքի հիմքը որով պարզ երևում է, թէ այս երկու գիւրքը եթէ միեւնոյն հեղինակի զըշեց շնն եղել, որ ըստ մեզ ձիշդ է, գոնէ Եղիշէն այնքան հմուտ է եղիլ Մակարայեցւոց գրքերին, որ իւր պատմութիւնը շարագրելիս Ս. Գրքի յիշեալ մասի լեզուն այնքան բնական կերպով հիւսել է իւր սեփականի հետ. հարկաւ այդ երկու անձինք, եթէ միայն երկու են՝ առաջին թարգմանիչը և երկրորդի հեղինակը, միեւնոյն դպրոցին պէտք է պատկանած լինէին:

Ս. Ե.



„Русская старина“ ամսագրի այս տարուայ Սեպտեմբերի տետրում լոյս տեսաւ Ենրսէս Ծ. ի մի նամակը գրուած իշխան Դմիտրի Իվանովիչ Դոլգորուկիին, \* որ թարգմանաբար յառաջ ենք բերում:

Մարտ 6. 1854 ա. № 106. Ի ք. Տիբլիս:

Այն քարերարութիւնը և հզօր պաշտպանութիւնը, որ ցոյց տրուեցաւ Չեր կողմից հայերին քարեխօս հանդիսանալովն Կ. Մեծութիւն Պարսից Եանի առաջ, որ ամենաողորմածաբար շնորհեց հայոց Ս. Փրկիչ մեծնաստանի մինչև այժմ՝ հաւարած ըլլոր պարտքերը և ազատեց նորան ընդ միշտ ըլլոր պետական պահանջներից և հարկերից՝ կանգնեցին Չեզ համար, Եկեղեցու արժանի զասակ, ամբողջ հայ ազգի անհուն և յարատեւ շնորհապարտութեան արժան և նոցա սրտերի տախտակնարի վրայ փորագրեցին Չեր անմահ անունն, ի շարս այն մեծ ազգային քարերարների, որոնք արժանի են յաւիտենական շնորհակալութեան:

Թէև Չերը պայծառափայլութեան բազմաթիւ քարերարութիւնների համար ես արդէն քաղղ ունեցայ արտայայտել իմ խորին շնորհակալութիւնս առ Չեզ իմ՝ և ինձ հա-


\* Իշխանն այդ ժամանակ Ռուսիոյ լիազօր դեսպանի պաշտօն էր կատարում Թէհրանում՝ Պարսից Դրանը:

ատացած հօտի կողմից, 1851 թ. հոկտ. 20-ի № 361 նամակով, բայց միշտ ի յուշ ունենալով այդ ամէնը, ես կրկին իմ արտեւանդն շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեր հայ ազգին մատուցած բոլոր ծառայութիւնների համար, որ Ձեր առ Ս. Եկեղեցին տաճած մշմարիտ քրիստոնէական — կրօնական զգացումների արտայայտութիւնն է միայն:

Աղօթելով, որ Ամենաբարձրեալը իր շնորհաց օրհնութիւնն առաքէ Ձերդ Պայծառափայլութեան եւ Նորա Չեզ պարգեւած ընտանեացդ վրայ, ես վերադառնալով եմ առ Նա շնորհակալութիւնս, որպէս զի երկարէ Նա Ձեր օրհնեալ կեանքն ի փառս քրիստոնէութեան եւ յուրախութիւն Չեզնով քարեքաստ վիճակ ունեցող հայ ազգի. թող Նորա Աջը հովանի լինի Ձեզ՝ Ձեր բազմաշխատ գործունէութեան ասպարիզով:

Համեցէք, Ձերդ Պայծառափայլութիւն, ի փառս Ռուսիոյ մեծագոր կայսեր անուան, որի ներկայացուցիչն էք, շարունակելով Ձեր բարերարութիւնը զիղով հայերի վրայ, ցոյց տալ եւ Ձեր հզօր պաշտպանութիւնը եւ աջակցութիւնը մօտ ժամանակներս ազգային գործերով թէհրան եկած իսպահանի հայոց թեմական առաջնորդ թաղէոս եպիսկոպոսին՝ նորա իրեն հաւատացած քրիստոսի հօտի վարչական գործերի մէջ, եւ հաւատի եղէք՝ թէ առ նորին քարձր սրբազնութիւնը Ձեր կողմից արտայայտած շնորհները ես կընդունեմ՝ իբր դէպի ինձ արտայայտած՝ իբր մշմարիտ բարերարութիւն դէպի իմ՝ ազգը:

Ենթադրում եմ, որ Նորին Պայծառափայլութիւն իշխանունիւնս եւ արդէն ներկայացրած կլինի յիշեալ արհուն Չեզ, այն բարեհաճ ուշադրութեամբ, որ ունի առ Նա:



ԺՈՂՈՎԻԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
Բ Ե Կ Ո Ր Ն Ե Ր.  
(ԲՆԼԼԱՆՆԵԼԻ ԲԱՐՔԱՍՈՎ) \*

Քամին էկաւ էրան էրան,  
Մշու բաջեր սեւատրան,  
Տարան կիտան թօփի բերան.

Մայրըկայ դարտեր սարերով էր.  
Անուշ, անուշ, անուշ ջան:

Ես իսակն էնք իստամբուլցին,  
Օտներս ծեռներս քալամ շեցին,  
Դէպի Պօլիս յղըրկեցին.  
Մայրըկայ դարտեր ելն . . . :

Ես Արշակն էնք միխամաջի,  
Փախայ էլայ սարեր մացի.  
Չարէս կորսաւ նստայ լացի,  
Եօթն օր քօպիկ ծան վրայ մացի.  
ՄԱՅՐԻԿ, մայրըկայ դարտեր ելն . . . :

Աստուած սպանէ քօս վարժապետ,  
Քեաւոր մատնեց, սանիկն ի հետ.  
Ծամբէս էլաւ դէպի Պօլիս,  
Թաժայ նոր հարս աեղիս դրեց.  
ՄԱՅՐԻԿ, մայրըկայ դարտեր ելն:

Սուրբ ճննդեան մեծի տօնին,  
Մգիկ յիշէք մըջ աղօթքին.  
Ես գնացի անի ու վուխով,  
Չը գնէ մացի խիստ կարօտով.  
Մայրըկայ դարտեր ելն:

\* \* \*

Չօգօն զօգօն Չիարաթցիք,  
Էլմէ զօգօն Չիարաթցիք:<sup>1</sup>  
Կըտոնի ուտող էդ Կանուէնցիք.  
Օսկոռ կոճող էդ Զրեցիք.  
Մեռել քրտող Յաննջվանցիք.  
Պասի ուտող Յաննջեցիք.  
Թուլթուն ցանող էդ Մօկունցիք.  
Խաղող ուտող Դէրկէվցիք.  
Վանքի շներ էդ Յառխըցիք.  
Շատ կորիճ էն Հաւատորկցիք.  
Շատ ազգասէր էդ Բերթակցիք.  
Գմշու պահող էդ Նորշէնցիք.  
Պաղ շուր խմող Ալիզունացիք.  
Մըտող պահող էդ Սօխզովցիք.  
Սիրող կէնէն էդ Յօղունցիք.  
Ժառ ու մղոտ էդ Համնեցիք.  
Շատ վախկոտ էն էդ Բզլցիք.  
Էրկրի անթօթին էն Խոքերցիք.

<sup>1</sup> Իրացանչեք տողի վերջը կրկնել „էլմէ՛ զօգօն Չիարաթցիք“:

\* Ս. Հայկունու ծողովածուկից: